բողացայ իմանալ բացի զանձապահից, միայն հաւաստի գիտեմ, որ իւրաքանչիւր զորձակատար հայի հետ եղել է մի թուրք զորձակատար:

***

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 28-ին տեղի ունեցաւ ԹԻՖԼԻՍԻ արուեստագործական զարդոյն և քաղաքային ուսումնարանի բացումը: Բացմանը ներկայ էին Կովկասեան Փոխարքայի օգնականը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, փոխ-հսկաւորապետ, զուտայի և արուեստաւոր դասի ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն: Քաղաքագլխի օգնական պ. Թամամշեվ բացմանը յարմար ճառ ասեց:

—

ՆՈՎՈ-ԽԻԱՆՈՎԻՑ, պ. Ալեքսանդր Շահմեհանից ստացանք տարեկան վճարը 10 բուբլ յօգուտ «Սիրասատան» ընկերութեան, որ այժմ կուզարկենք «Մխիթեար ընկերութեանը:»

Ստացանք պ. Միքայէլ Երկաթեանից, ՏՈՒԱՆԼՈԳ քաղաքից 5 բուբլ յօգուտ Վասպուրականի հայ սոխատանջների:

—

Ս. Պետերբուրգի զերմանական «Ս. Պետերբուրգեան լրագիր» խօսելով զոհոր Գրիգոր Աբգարեանի ազատասօսութեան մասին «Սովոր թիւրքա-Հայաստանում», որ թարգմանել է զերմաներէն լեզուով Աբրահամ Ամիրխանեանց, ասում է, որ այդ բրօշիւրը ոչ թէ միայն Հայաստանի սովի մասին բաւական տեղեկութիւն է տալիս ընթերցողին, բայց իր երկրորդ մասի մէջ այնպիսի մտքեր է յայտնում հայի հաւատիմամ մասին, որ անուշադիր չէ կարող թողնել ռուս ընթերցողը, այլի առնելով որ եւրոպական Ռուսաստանի մի քանի նահանգներում այժմ թանգութիւն և երաշտութիւն է, այնպէս որ նոյն տնտեսական ինդիրը արդեօք հայի հաւատիմամ վերաբերութեամբ ինքնաօգնութիւն թէ կառավարութեան օգնութիւն է նախապատուելի, պէտք է մտոիկ ապագայում վճռվի և Ռուսաստանում: Գերման սկսն լրագիրը խորհուրդ է տալիս ռուս հասարակութեանը կարդալ այդ բրօշիւրը:

—

Յօգուտ Վանի սովատանջների ստացանք 35 բուբլ Թիֆլիսաբ և չիտեւեալ անձերից: Խեչոյ Գալուստով 5 բ., Աւետիք Վարդապետեանց 3 բ. Գրիգոր Մեհրաբեանց 3., Անոյտ 2 բ., Տիգրան Գուլնազարեան 2 բ., Յովսէփ Խաչ բոյ 3 բ., օրիորդ Մարիամ Շանշեանց 5 բ., օրիորդ Սօֆիա Շահնազարեանց 5 բ., Եազոն Նէրսէսով 1 բ., Ազարէկեանց 1 բ., Կոմիտասին Սպիտակով 1 բ., Կոնստանտին Գօրգանեանց 1 բ.: Ընդամենը 35 բուբլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԵՐ

«Էջտոերի» ընկերութեանը հեռագրում են Կ. Պոլսից սեպտեմբերի 23-ից: Դեսպաններին յանձնած Բ. Դրան գրութեան մէջ ասված է. «Զիջելով մեծ պետութիւնների անընդհատ ձնշմանը, Բ. Դուռը որոշեց քննել անմիջապէս ազատուած բոլոր հարցերը Թիւրքաց կառավարութիւնը կաշխատի համոզել ալբանցիներին, որ նրանք յանձնեն Լիւնօզորցիներին Դուլցինիօ սարդէն յայտնի պայմանների: Ցուցնատանի վերաբերութեամբ Բ. Դուռը մի սահման է առաջարկում, որ սկսվում է Հիւսիսից Վլոյի մօտ, հարաւից Լարիսսա, Մեսոյօվօ և Սանիցայի մօտ և վերջանում է Արտա գետի բերանի մօտ: Խոստացած վերանորոգութիւնները կը մտցնվին Փոքր-Ասիայի մէջ երեք ամսվայ ընթացքում: Եւրոպական Թիւրքիայի մէջ կը մտցնվին վերանորոգութիւններ այն չափով, որ համապատասխանի լինի Թիւրքիայի ամրոյզութեանը: Թիւրքաց արժէքդրների օտարատիպատան տէրերը կը հրաւիրվին, որ ուղարկեն Կ. Պոլիս իրանց հաւատարմատարներին համաձայնութիւն կայացնելու համար: Մի քանի և կամուտներ կը յատկացնվին ազգասէրները վճռելու համար: Այս վերանորոգութիւնները առաջարկելով, Բ. Դուռը պնդում է, որ պետութիւնները հրաժարվեն ծովային ցոյց ցից:

«Հաւասի» ընկերութիւնը հոկտեմբերի 1-ին հաղորդեց ֆրանսական լրագիրներին, որ սխալ է այն լուրը, իբր թէ ֆրանսական նաւերը յետ են կանչված Ագրիական ծովից: Ֆրանսական կառավարութիւնը հաստատ վճռել է, հետևելով զգոյշ քաղաքականութեանը, չը բաժանվել եւրոպական համաձայնութիւնից:

Փարիզի մէջ հրատարակվող «Temps» լրագիրը տպել է հետևեալը: Լրագիրներից մէկի մէջ լուր է տպված իբր թէ ֆրանսական նաւերը յետ են կանչված Ագրիական ծովից: Նոյն լրագիրը գուշակում է նոյնպէս և միւս պետութիւնների նաւերի յետ կանչելը և ծովային ցոյցի լուծումը: Այդ լուրը սխալ է և դրա տարածվելը պատճառ դարձել է հետևեալ իրողութիւնը: Որովհետև Դրաւոյա նաւահանգիստի մէջ անդադար փոխադրիներ են լինում, հետևապէս նաւատորմն էլ այդտեղ փոփոխվում է ենթարկվում, այդ պատճառով վճռված է նաւատորմը տեղափոխել Բօկկադի Կատարոնաւահանգիստը, որ Բագուզայի և Դուլցինիօի մէջ տեղն է գտնվում: Ծովային ցոյցի լուծումը մասին ոչ ոք չէ էլ մտածում: Մասնաւոր գրաւոր Ֆրանսիան գիտատորութիւն չունի անջատվել եւրոպական համաձայնութիւնից: Նա պահպանում է իր գրութիւնը, պետութիւնների հետ համաձայն է գործում և Ֆրանսական ծովապետին տուած առանձին հրահանգները անփոփոխ է թողնում: Հաւատացնում են, որ Անդլիան մտադիր է արտաքոյ կարգի միջոցներ գործադրել, եթէ եւրոպական համաձայնութիւնը խախտվի: Պէտք է աւելացնել, որ Ֆրանսական արտաքին գործերի մինիստրը շուտով կընդունվի անդլիական դեսպան Լայոնսին, որ կը գայ Լոնդոնից և կը յայտնվի անդլիական կառավարութեան վճիռները:

Լոնդոնի Ջ հրատարակվող «Stand rd» լրագրին Բագուզայից հաղորդում են, որ աւստրիական ազրիներից ստացված լուրը, իբր թէ ալբանցիները այրել են Դուլցինիօ քաղաքը, սխալ է: Հէնց որ այդ լուրը ստացվեցաւ, ծովապետ Սէյմուր ուղարկեց մի աւստրիական նաւ անցքի մանրամասները իմանալու համար: Նաւի հրամանատարը տեղեկացաւ, որ այդպիսի անցք չէ պատահել:

Լոնդոնից «Temps» լրագրին գրում են սեպտեմբերի 28-ից: Երկու երեկոյեան յոյն վաճառականները մի քանի մասնաւոր նամակներ ստացան, որոնք չափազանց անհանգստացնող լուրեր են պարունակում: Այդ լուրերից երևում է, որ սուլթանը չէ յետ կանչում Միդաթ-փաշայի զորքերին և մտադիր է ընդդիմանալ Եւրոպայի կամքին:

Աբրանցիները յոյս են դրել այդ զորքերի օգնութեան վրա, իսկ Լիւնօզորցիները գործ չեն սկսում, պահանջելով Թիւրքաց կանոնաւոր զորքերի հեռանալը: Ասում են, որ պ. Գոշէն հեռագրել է արտաքին գործերի մինիստրին, որ իբր թէ Կ. Պոլսի մէջ լուր է տարածվում սուլթանի խելագարութեան մասին:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավէժ, 23 սեպտեմբ.

Այս միջոցս Պարսկաստանում խիստ հետաքրքրական լուրեր կան, որոնցից մէնն է ազգային նախարարի Սպիտակարի անկումը Վեհափառ Շահի համանով, իսկ ասելի հետաքրքրականն է հաղորդումը Նէյիս Իրաղուլլահի արշաւանքը դէպի Պարսկաստանի սահմանները: Թիւրքերի այդ դենպատարագները վաղուց է որ մեծամեծ պատրաստութեան վրա էր, վաղուց է, որ նա իր մտքումը դրել էր կատարել մի ապաստանութիւն, որ պիտի տարածվէր ամբողջ Ատրպատականի գաւառների վրա: Մի կայծ միայն բաւական էր լեռնական մարեալի պատրաստի նշան տալուն, այդ էլ իրօք պատահեցաւ: Քիւրդստանի այն մեծ կտորը որ բաժանվեց քիւրդ ցեղերով պարսից բաժնում, արդէն մի համոյ պատառ էր Նէյիսի համար և սրբազան պարտաւորութիւն գտաւ բերել նորան դիսների (պարսիկների) ձեռքից և ենթարկել իր նոր ձեռնարկած սիւնի իշխանութեան տակ: Մի քանի դարամի առաջ, Սոմբրքուլայ քաղաքում քիւրդ Համզ աղան, որը Մանգուռ ասված ցեղի գլխաւորն է, մի որ և իցէ պատճառի համար ապստամբելով պարսից կառավարութիւնից, խլորդ անցաւ իր քաջ պատերազմող ցեղի հետ թիւրքաց քրդաշատ երկիրը, ուր Նէյիսը նորան գրկաբաց ընդունեց իր դրօշակի տակ, որին գուցէ նա վաղուց սպասում էր: Այժմ Համզաղան և Նէյիս-Իրաղուլլահի Նէյիս-Դաղրը որդին նշանակվել են նոր սնից մի մի զօրավարներ, որոնք իրանց բաղմաթիւ քիւրդ ապստամբներով անցել են թիւրքաց սահմանը և մտել պարսից հողը և, ըստ ամենց մի քանի տեղերի էլ արդէն սիրացել են: Այս վայրերի խանդիճաղանի զօրավարները Նէյիսի կողմից համաձայն սպասնում են տերպատան Իէվանդուզից սկսեալ մինչև Ուշնի, Սոմբուլայ, Սուլդուզ, Սէրդաշտ, Սակըզ, Բենաբ և դրանց բոլոր շրջակայ տա ածութիւնը, համանելով պանց քրդաց երկիր, որովհետև այդ տեղերում բաւական սիւնները են բնակած: Սոմբրքուլայ քաղաքի բնակիչներն այժմ գրեթէ զրված են երկիղից, այդ քաղաքում կային մի քանի տուն բնիկ և մի քանի հողի օտարական հայեր, որոնք բոլորն էլ խոյս տալով իրանց տեղից, եկան հասան Դաւրէժ: Դարանց գիտ էին երկու գորդիներ պ. Ա. Տէր-Յակոբով և պ. Թուգարով, որոնցից առաջինը նոյն քաղաքում զլուխ վճառականաց էր և երկրորդը փաստաբան: Պ. Տէր-Յակոբովը լինելով բարեկամ Համզ աղայի հետ, նորանից ազատագրութիւն էր ստացել առժամանակ հեռանալ Սոմբրքուլայից, այդ պատճառաւ նա շտապել էր գալու գալ պարսկի ենթարկված երկրից, որի հետ և գալու էին եկել բոլոր հայերը՝ ինչպէս և շիա պարսիկները: Ցիշեալ երկու պարսիները ինձ անձամբ պատմեցին այս բոլոր անցքերը: Սոմբրքուլայ գաւառի կառավարիչ արքայազուն պարսիկ իշխանը, տեսնելով որ իրան ևս փոտոգ է սպառնում, հեռացաւ իր պաշտօնատեղից և դիմեց նոյնպէս դէպի Դաւրէժ: Պարսից կառավարութիւնը այս հանգամանքը իմանալով, մի քանի բատալիոններ, զանազան հեծելազօրներ և Մեղանէներ դրկեց, որ ապստամբութիւնը զսպեն, մի քանի վայր զրկեալ ևս նորից պատրաստվում են գնալու: Հետևապէս մեծ յոյս կայ, որ Նէյիսի ամբարտաւան փառասիրութիւնը շուտով կը պատժեն և նորա զօրութիւնը կը խորտակեն, թէև ասում են, որ նա մինչև 60 հազար անկանոն զորք ունի պատրաստի, բայց դժուար թէ ուղիղ լինի: Այն միայն ճշմարիտ է, որ բոլոր քիւրդերը այս միջոցիս ոչ միայն հպատակում են, այլ նորան մի խօսքն անգամ ընդունում են իբրև Աստուածային պատգամ: Նէյիսը մի գիւղից կամ քաղաքից անցած ժամանակ, վերջին մակ քիւրդից սկսեալ մինչև ազատները, բէգերը և ցեղապետները, բոլոր ոտքերով գնում են նորա առաջ և չորում, որպէս զի փէշերը, ոտքերը, կօշիկները և մինչև անգամ ֆիս ոտքերը համբուրեն: Մի լեռնական ապստամբպետ, այն էլ գրօնաւոր, երբ այդ ասիճանի ջերմութեամբ պաշտվում է իր ցեղակիցներից անմատչելի լեռներում, ուրեմն հաւանական է, որ չահաւակ դէպքում նա շատ աւելի մարդ կարող է դէնքի տակ հրաւիրել: Բայց և այնպէս, շատ անգամ տեսնված է, որ այդպիսի ապստամբութիւնները մի ճախող դիպուածով, խսկոյն ցրվում են և անհետանում, որովհետև ապստամբողների մեծագոյն մասը ոգեորվում են այս և այն մարգուառերևոյթ նպաստաւոր յոյսերով. գէնց որ նշմարում են մի մեծապատ վտանգ, այդ յոյսերը օդն են ցնդում և իրանք սարսափի տակ ընկնում:

Այսօր դարձեալ զանազան լուրեր ստացվեցան մեր քաղաքում, որ իբր Նէյիս-Դաղրը 10 հազարից աւելի քիւրդ պատերազմողներով, այն էլ Հաների-Մարմինի հրացաններով զինված ոչ միայն մտել է Սոմբրքուլայ քաղաքը, այլ այդ տեղից էլ առաջացել է մինչև Միանդուաբ և Բինաբ որ մօտ է Մարաղա քաղաքին, որ տեղի հայերն էլ սարսափեցին և փախան: Լսելի որ մի քանի հայերին ճանապարհներում կողոպտել են և մի քանի պարսիկների էլ սպանել: Դարձեալ մի լուր, ասում են, որ Վանի կողմերում քրդերը 70-ի չափ հայեր կոտորել են Նէյիսի հրամանով: Բայց անենք ոչ է այս Նէյիս Իրաղուլլահը, և գրանից զատ այսքան զօրութիւն: Այստեղ արեւի լոյսն պէս երևում է մի աներևոյթ ոյժ, որը Նէյիսին մատնացոյց է լինում «դէպի առաջ», սակայն ինքը թագչում է....

Նէյիս Իրաղուլլահ հայրը եղել է մի դարվիշ, մի ճարպիկ մարդ, որը անդադար պտտելով քիւրդերի մէջ, աշխատել է բորբքել նրանց սրտի հանգած հուրը՝ դէպի իրանց սուրբ կրօնը, միշտ ասելի ցոյց տալով արշամարհիի քրիստոնեաներին՝ նորդ սի «գեաւարքը», որի ջանը (անձը) հալալ է սպանելու և ապրանքն գրաւելու, իբրև քիւրդի յաւիտենական սեփականութիւն: Այսպէս աւանդապետ Նէյիսը, վառելով լեռնական քրդերի սիրտը, մի քանի տարուան մէջ, ինքն էլ հասնում է իր նպատակին, որովհետև քրդերը նրան արժանացնում են շէյխութեան (հոգևոր ատիճան է:) Նա ձեռք է գցում մի քանի գիւղեր և ապա մեռնում է, որից յետոյ անմիջապէս ներկայ Նէյիս-Իրաղուլլահը ժառանգաւոր յաջորդում է իր հօրը, որպէս Նէյիս: Սրա համար ասում են՝, որ իր հօր կենդանութեան ժամանակ գալով Սոմբքուլայ քաղաքը, այնտեղ է աւարտել իր արաբական լեզուի ուսումը: Նէյիս-Իրաղուլլահը աւելի ճարպիկ լինելով, և զանազան ապաստանութիւններ անելով, հասնում է մեծ հարստութեան, այնպէս որ այժմ նրա կարաւանները և գիւղերը 200 կոտորից աւելի են, որոնք ցրված են Վանայ ծովակից մինչև Մուսով և Սուլէյմանի, Կորդուսց լեռների ուղղութեամբ: Վերջին պատերազմի ժամանակ Նէյիս Իրաղուլլահը աւելի հէշակ և աւելի հարստութիւն գտաւ. հանգամանքները նրան լաւ յաջողեցան, այժմ նա կատարեալ բռնապետ է և ինքն էլ ունի պատերազմական սիրտ և կրթութիւն: Նա դիպուածով տեսաց նրա մի թիկնապահին, որպէս ծպտեալ փախստական, որ եկել էր այստեղից Ռուսաստան փախչելու համար, իբր Նէյիսի երեսից. սակայն նա, իմ կարծիքով, Պարսկաստանի և Ռուսաստանի քրդերը ոգեորելու համար էր մանգալու: Նա պատմեց, որ Նէյիսը իւրաքանչիւր ուրբաթ օր՝ ոչ միայն զօրաժողով է անում, այլ բոլոր ցեղապետներին և կարգացողներին մէջլիս է հրաւիրում, և զանազան խորհուրդներ անում, արշաւանքի համար: Նրան սարսափեցնում է միայն գեներալ Տէր-Զալարեանի անունը իր կոզակներով. յդ յարիական մարդու անունից է միայն սարսափում նա: Նէյիսը, որպէս բռնապետ, խիստ է վարվում չարագործների հետ, նա կախել է տասիս, ողջ ողջ թաղել է տալիս, գլուխներ է կտրել տալիս, եթէ որ յանցդնել էին նրա իշխանութեան մէջ մի որ և իցէ եղեռնագործութիւն անել: Նա ունի, ասում էր, մեծամեծ թնդանօթներ և ամբողջ իր զօրքի համար Մարտինի հրացաններ.—շատ բարի, բայց ով տուաւ նրան...

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերին: Ազգային ժողովը կը գումարվի նոյեմբերի 9-ին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 հոկտեմբերին: Երկրի շրջաբերութեան մէջ եղած ամերիկական դրամի քանակը թիւնը հաշված է 370 միլիոն զօլար ոսկի և 150 միլիոն զրար արծաթ: Բացի այդ պետական գանձարանի մէջ կան 68 միլիոնի ձուլած ոսկու կտորներ և 51½ միլիոն արծաթի կտորներ:

Կ. ՊՕԼԻՍ, 2 հոկտեմբերին: Ասիմ փաշա յայտնեց պետութիւնների դեսպաններին, որ Բ. Դուռը Դուլցինիօի ամրոյզ նահանգը անպապաղ կը յանձնի ջերմեռանդներին:

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերին: Ֆելիկս Պիա ենթարկված է դատարանին բերելու ջանք բազարդութիւնը զովելու պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերին: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 94 բ. 12 կ., երկրորդ 12 բ. կ., երրորդ 93 բ. 25 կ., չորրորդ 82 բ. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 216 բ., երկրորդ 210 բ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 բ. 62 կ., երկրորդ 90 բ. 62 կ., երրորդ 90 բ. 62 կ., ոսկի 8 բ. 16 կ., Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24 պէնս, ռուսաց 100 բ. Համբուրգի վրա 203 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 257 ֆրանկ: Ցրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ